**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 4-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրում 2020 թվականի սեպտեմբերի 11-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 6-ի N 1316-N որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | Պայմանագրի գնի նվազեցում, ինչպես նաև աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի և վճարման ժամանակացույցի փոփոխություն: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 կետ: |

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**

**04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի**

ք. Երևան // .09.2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ե. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 06.08.2020թ. N 1316-Ն որոշումը և Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 5.1.2 կետում նշված <<163 616 900 (մեկ հարյուր վաթսուներեք միլիոն վեց հարյուր տասնվեց հազար ինը հարյուր)>> և <<27 269 483 (քսանյոթ միլիոն երկու հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր ութսուներեք)>> թվերը և բառերը փոխարինել համապատասխանաբար՝ <<114 430 716 (մեկ հարյուր տասնչորս միլիոն չորս հարյուր երեսուն հազար յոթ հարյուր տասնվեց)>> և <<19 071 786 (տասնինը միլիոն յոթանասունմեկ հազար յոթ հարյուր ութսունվեց)>> թվերով և բառերով:

1.1.2 Պայմանագրի N 2 հավելվածում 2020թ. համար նախատեսված օրացուցային գրաֆիկը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.1.3 Պայմանագրի N 3 հավելվածում 2020թ. համար նախատեսված վճարման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից և հավելված N 2-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՊԱԼԱՌՈՒ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011023778<br>ՀՎՀՀ 02565827 | <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ<br>Ի/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26<br>Գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14<br><<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ<br>Հ/Հ 11500374479000<br>ՀՎՀՀ 00440841 |
| Գլխավոր քարտուղար՝<br>Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն) | Տնօրեն՝<br>Ե. Գևորգյան<br>(ստորագրություն)<br>Կ Տ. |

*Հավելված N 1*
*04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի*
*11.09.2020թ. կնքված N 2 համաձայնագրի*

**<<ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ***
**Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների կատարման**

**2020թ. հատկացված գումարների շրջանակներում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ**

**ըստ աշխատանքների ծավալների**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով) | Աշխատանքների կատարման ժամկետը մինչև |
|---|---|---|
| 1 | 48 418 416 | 30.09.2020թ. ներառյալ |
| 2 | 114 430 716 | 30.12.2020թ. ներառյալ |

**ըստ աշխատանքների առանձին տեսակների**

| N ը/կ | Կատարվելիք աշխատանքների անվանումը | Կատարված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը |
|---|---|---|
| 1 | Վերակառուցման միջոցառումների և ներքին հաղորդակցուղիների կառուցման աշխատանքներ, ներքին հարդարման աշխատանքների մեկնարկ | 30.09.2020թ. ներառյալ |
| 2 | Ներքին հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքներ | 30.12.2020թ. ներառյալ |

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:>>:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝ ______ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
ի/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն՝ ______ Ե. Գևորգյան
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի*
*11.09.2020թ. կնքված N 2 համաձայնագրի*

## <<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների կատարման**

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45611200/1 | Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքներ | - | - | - | - | - | - | 48 418 416 | 48 418 416 | 48 418 416 | 94 430 716 | 94 430 716 | 114 430 716 | 114 430 716 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
ի/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն՝

_____________ Ե. Գևորգյան
(ստորագրություն)

Կ.Տ.